

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով


This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material









7
ԺԱՏԱԽՕՍ

ՍԱՓՐԻԶԸ



ՔՐՔՋԱԼԻՐ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԱՐԱՐ



ԸՆԳՈՐԻՆԱԿԵԿ

ՄԻՀՐԴԱՏ Մ. ՀԱՅԿԱԶՆ

ՅՈՒՇԱՐԱՐ ԵՒ ԴԵՐԱՍԱՆ



13 ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ՅԱԿՈՒ ԱՐԱՀԱՄԵԱՆ

Պապը Ալի Րեփօ ԷՖ. Խան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ "ԹԷՄԻԼԱՅ,"

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳՐԱԳՈՐԾԱՆ

ԳՐԱԳՈՐԾԱՆ
ԳՐԱԳՈՐԾԱՆ ԵՎ 2

ԷՐԵՐԵՍԻ ԳՐԱՏԻՐ
HARRY G. BERBERIAN
337 WASHINGTON ST.
BOSTON MASS

ԱՆՁԻՆՔ

ՖՐԱՆՍՈՒԱ ԹՕՄՆԻԻ հայրը

ԲիէՌ տանուէրը

Սափրիչ ԿՈՄԻՏԱՍ

ՍԻՄՕՆ ԲիէՌԻ ծառան

ԺՕՐԺ » »

ԹՕՄՆԻ

ՖԻԼԻԲ ԹՕՄՆԻԻ ծառան

ԲԱՍԿԱԼ ԹՕՄՆԻԻ հօրեղբայրը

ՖՐԱՆՍՈՒԱ ԹՕՄՆԻԻ հայրը



Ս Ր Ա Ր Ա.

“ՎԱՅԵԼՈՒՉ ՍԵՆԵԱԿ ՄԸ”

Տ Ե Ս Ի Լ Ա.

Բ Ի Է Ռ (առանձին)

Ժամը վեցը եկածին պէս. երկու տարիէ ի վեր իր սիրոյն կրակովը վառուած Թօմնիս պիտի տեսնեմ, (գրպանին ժամացոյցը նայելով) այս թշուառական ժամացոյցն ալ չի քաշեր, միշտ չորսին վրայ է, եթէ ստակ վճարելուս ըլլայի, իսկոյն նոյն ժամը կը մօտենար... Բայց երջանկութեան վայրկեանները տարիներու նման կ'երկնան, և ինծի պէս սիրահարներու սիրտերը կը մաշեցնեն. ասոր հետ մեկտեղ եթէ դռնէն մտած ատենս տեսնուիմ ուրիշէ մը, գործս գէշ է: Արդեօք երթամ թէ չերթամ, (քիչ մը մտածելով) է՛հ, ինչ որ ըլլայ հոգ չէ, քանի որ կուգամ ըսի, պիտի երթամ, (նայելիին դէմը անցած կը շօշուի) ո՛հ, ինչ ընելու է հիմա, մոռցեր եմ ածիլուելու, բայց քանի որ դեռ ժամանակ ունինք՝ սա մեր սափրիչը կանչել տանք ու ածիլուինք, (զանգակը կը զարնէ) Սիմօն, Սիմօն:

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՆՈՅՆ ԵՒ ՍԻՄՕՆ (վազելով)

ՍԻՄՕՆ. — Ի՞նչ կը հրամայէք տէր իմ:

ԲԻԷՌ. — Շուտով գնա՛ սա սափրիչը կանչէ՛:

ՍԻՄՕՆ. — Ո՞ր սափրիչը :

ԲԻԷՌ. — Ձե՞ս գիտեր, ամէն ատեն ո՞ր սափրիչին կ'ածիլուիմ :

ՍԻՄՕՆ. — Սա փողոցին ծայրի թղթավաճառին քովի...

ԲԻԷՌ. — Այո՛, այո՛, ո՛ւր առ բե՛ր :

ՍԻՄՕՆ. — Շատ աղէկ, սակայն եթէ գործ ունենայ :

ԲԻԷՌ. — Ուրիշ մը գտիր :

ՍԻՄՕՆ. — (Մինչեւ դրանք առջեւ կ'երթայ եւ կը դառնայ) : Եթէ գործը լինալու վրայ է, սպասե՛մ, թէ ոչ :

ԲԻԷՌ. — Քանի որ ուրիշները կան, ինչո՞ւ սպասես :

ՍԻՄՕՆ. — (Դարձեալ դուռը կ'երթայ եւ կը դառնայ) : Եթէ ուրիշ սափրիչ մը բերելու ըլլամ...

ԲԻԷՌ. — (Քիչ մը բարկացո՞ս) Երկնցուցիր Սիմօն, ի՞նչ աղէկ ըլլայ թող ըլլայ. բաւական է որ սափրիչ մը բերես :

ՍԻՄՕՆ. — (Դարձեալ դուռը երթալով կը դառնայ) տարակոյս չկայ թէ ձեռքը շուտ մէկը ըլլալու է :

ԲԻԷՌ. — (Ձայրացած) Ի՞նչ խօսք չհասկցող մարդ ես Սիմօն, ինչ որ ըլլայ թող ըլլայ բե՛ր :

ՍԻՄՕՆ. — (Դարձեալ դուռը կ'երթայ եւ կը դառնայ) զոր օրինակ երիտասարդ ըլլայ թէ ծեր :

ԲԻԷՌ. — (Աւելի զայրացած) Սիմօն բարկուած թիւնս մի գրգռեր, կարծեմ թէ ըստ սովորութեան միտք կը քերուի :

ՍԻՄՕՆ. — (Դռնէն դուրս կ'ելլէ եւ կը մտնէ) Կեցէք տէր իմ, հիմա եթէ հարցնեմ դարձեալ պիտի բարկանաք, գործիքները հետը բերէ թէ ոչ :

ԲԻԷՌ. — (Տեղէն ցատկելով) հասկցայ աւանակ, զիս կը ծաղրես, և ալ բաւական է շուտ դուրս ել գահան (ծեծելով կը վանէ) :

Տ Ե Ս Ի Լ Դ.

Բիէն. — (Առանձին) ծառայ չէ, Աստուծոյ մէկ պատիժը, իմ տեղս եթէ ուրիշ մը ըլլար, շատոնց վնասած էր, ինչ որ է մենք ալ պանիր հացով բըռնած ենք ա' :

Տ Ե Ս Ի Լ Դ.

Ն Ո Յ Ն Է Լ Ժ Օ Ռ Ժ

Բիէն. — Օ', պարոն աչքըբաց ի՛նչ ըրիր նաշինք, կօշկակարին դացի՞ր :

ԺՕՌԺ. — Անա անկէ կուգամ, բայց մուճակներդ վաղը պիտի տայ :

Բիէն. — Ինծի այսօր պէտք էր, բայց ի՞նչ ընենք վաղը թող ըլլայ, դուն հիմա սա մեծ փողոցին մէջ...

ԺՕՌԺ. — Շատ աղէկ, շատ աղէկ, (դէպի դուռը կը վազէ) :

Բիէն. — Կեցիր ծօ' կեցիր, ըսելիքիս կէսը բերանս մնաց : Պարոն Նիկողիմոսին տունը դիտես այնպէս չէ՞ :

ԺՕՌԺ. — Հաղար անգամ դացեր եկեր եմ (դէպի դուռը կը վազէ) :

Բիէն. — Աստուած պատիժդ տայ շան լակոտ, կեցիր, ո՛ւր կ'երթաս, (մեկուսի) աս ալ միւս թըշուառականին հակառակը (բարձր) պարոն Նիկողիմոսին գնա և....

ԺՕՌԺ. — Անմիջապէս տէր իմ, (դէպի դուռը կը վազէ) :

Բիէն. — (Բարեկութեամբ ոտք ելլելով) ո՛ւր 'կերթաս գարշելի :

ԺՕՌԺ. — Պարոն Նիկողիմոսին տունը չըսի՞ր :

ԲԻԷՌ. — Այո՛, բայց ի՞նչ պիտի ըսես :

ԺՕՌԺ. — Ես ի՞նչ գիտնամ :

ԲԻԷՌ. — Քանի որ ըսելիքդ չես գիտեր իշու գլուխ ,
ինչո՞ւ առանց խօսքիս վերջը բերելու կը վազես :

ԺՕՌԺ. — Խօսեցէ՛ք տէր իմ :

ԲԻԷՌ. — Պարոն Նիկողիմոսը տեսիր և այս իրի-
կուն իրեն այցելութեան չկրնալ երթալս իմացուր :
Ահա այսչափ . հիմա կորսուէ :

ԺՕՌԺ. — (Ծանրաբայլ մեկնած ասեմը) պարոն
Նիկողիմոսը տեսիր և այս իրիկուն իրեն այցելութեան
չկրնալ երթալս իմացուր . ահա այսչափ , կորսուէ :
(վազելով կը մեկնի) :

Տ Ե Ս Ի Լ Ե .

ԲԻԷՌ. — (Առանձին) այս ի՞նչ գարշելի մարդոց
մէջ մնացեր եմ , մէկը պաշտօնի մը ղրկեցի՞ր մի , ան-
պատճառ ծեծելով դռնէն դուրս պիտի հանես , միւսն
ալ չուանով պիտի կապես տեղ մը , և ընելիք գործերդ
իմացնելէդ ետքը թող պիտի տաս որ երթան , կը
ճամբեմ , կը ճամբեմ , բայց ողորմած հողի հօրս հին
ծառաներէն ըլլալուն համար չեմ ուղեր քովէս հե-
ռացնել :

Տ Ե Ս Ի Լ Զ .

Ն Ո Յ Ն Ե Լ Ս Ի Մ Օ Ն

ՍԻՄՕՆ. — Ձեր սափրիչը տեղ մը գացած ըլլա-
լով անոր տեղը ուրիշ մը բերի :

ԲԻԷՌ. — Հոգ չէ , թող ներս գայ :

ՍԻՄՕՆ. — (Դրան մօտեցալով) ներս հրամայեցէք
պարոն սափրիչ :

Տ Ե Ս Ի Լ Է.

Ն Ո Յ Ն Կ Լ Ս Ա Փ Ր Ի Չ

ՍԱՓՐԻՉ. — (Ներս կը մտնէ, խոնարհութիւն կ'ընէ, վայրկեան մը Բիւռը դիտելէն յետոյ, իբր քէ ճանչնալու պէս, մեկուսի) Ե՛րբն է արդեօք, եթէ ոչ նմանցունք, ոչ, ճիշդ է, այն ըլլալու է... բայց անգամ մը անունը հարցնենք... (բարձր Բիւռին) ներեցէք պարոն, ձեր պատուական անունը ի՞նչ է:

Բիւռ. — Բիւռ:

ՍԱՓՐԻՉ. — Օ՛... այս որքա՛ն ալ շուտ մեծցեր էք, բաւական ալ պիտի ունեցեր էք, ձեզ տեսնելով ճանչնալու որչափ ուրախ եմ:

Բիւռ. — Ըսել է զիս կը ճանչնաք:

ՍԱՓՐԻՉ. — Եւ ի՞նչպէս չճանչնամ, քանի որ ձեռքս մեծցած էք, ես այս տանը հին բարեկամներէն եմ, վախճանեալ սիրելի հայրիկիդ, Աստուած ողորմի հոգոյն, սափրիչը ես էի, կարելի՞ է որ ձեզ չճանչնամ, իրաւ է թէ հայրդ 20 տարիէ որ մեռած է, (քիչ մը մտածելէ ետք) այո՛ սխալած չեմ, ճիշդ 20 տարիէ է, վասն զի լուսահոգին 59ին մեռաւ, և այն տարիքին...

Բիւռ. — (Ժամացոյցը նայելով) ա՛հ, կաղաչեմ պարոն սափրիչ, գործիքդ պատրաստէ, վասն զի ստիպողական գործ մը ունիմ, պիտի երթամ:

ՍԱՓՐԻՉ. — Շատ աղէկ, պիտի ածիլուի՞ք թէ մազերնիդ կտրել պիտի տաք:

Բիւռ. — Միմիայն պիտի ածիլուիմ, բայց կ'աղաչեմ քիչ մը շուտ բռնեցէք ձեռքերնիդ:

ՍԱՓՐԻՉ. — Ըստ իս եթէ միայն մազերնիդ կտրել տայիք, աւելի աղէկ կ'ընէիք:

Բիւռ. — Ինչո՞ւ:

ՍԱՓՐԻԶ. — Որովհետեւ շաբաթ օր ածիլուիլը
գէշ է կ'ըսեն:

ԲԻԷՌ. — Դուք աղէկութեանը գէշութեանը մի
նայիք սա մօրուքս մաքրեցէք:

ՍԱՓՐԻԶ. — Իմ պարտքս է, անպամ մը ըսել,
կ'ուզէ՛ք ընդունեցէք, կ'ուզէք մի՛ ընդունիք, (մեկուսի)
արդարեւ իմ ըրածս ալ խենդութիւն է, ինչ որ հրամայեն
կատարելու եմ, (անձեռոցը Բիեռին վզին կապելէն
ետքը) լուսահողի հայրերնիդ, Աստուած ողորմի հո-
գոյն, շաբաթ օր մը ածիլուելու համար զիս կանչած
էր, իրեն ըսի թէ եկէք այսօր մի ածիլուիք. (կը սկսի
դէմքը լուալ) այն ալ ձեզի նման ինչո՞ւ ըսելով պատ-
ճառը հարցուց, երբեք չեմ մոռցած դրպանէն ֆրանք
մը հանելով, շնորհակալ եմ, ստիբիչ ըսաւ որ զիս կը
հոգաս. առ այս դրամը իբր վարձք, թէպէտ և այսօր
չպիտի ածիլուիմ, բայց չեմ ալ ուզեր որ դու ֆեսս
կրես ինձ համար: Ես անոր նման հաւատացեալ, աղ-
քատասէր, աստուածավախ անոր նման որբերու պաշտ-
պան մարդ չտեսայ... ո՞ւր են այն ատենուան մար-
դիկը... դուք այն ատեն դեռ պղտիկ տղայ մըն էիք և
ո՞րչափ ալ չարութիւն կը գործէիք: Օր մը սանտրիս
ակռաները ամբողջ կոտորեցիք. չեմ գիտեր կը յիշե՞ս:
Աղէկ միտքս եկաւ, դուք եղբայր մին ալ ունէիք Բօլ
անուամբ, անշուշտ բաւական մեծցած է հիմա: Ա՛հ,
ո՞ւր մնացին այն ժամանակները:

ԲԻԷՌ. — (Մեկուսի) առ քեզի փորձանք մըն ալ:

ՍԱՓՐԻԶ. — Իսկ ձեր դայեակին տղան ի՞նչ բարի
տղայ մըն էր, երբեմն, երբեմն քեզի գրկած ինծի կը
բերէր որ սիրեմ, ա՛յն ատեն նեղ փողոցին խանութս
30 դահեկանով վարձած էի, հիմա 150 դահեկան տա-
լէս ետքը թշուառական տէրը դարձեալ կը մոմռայ:
Այնպիսի խիստ մարդ մըն է որ, անցեալ օր քիչ մնաց

իրար պիտի բաժնակցենք, խանութին նստարանները
հինցած ըլլալով նորոգել տուր ըսելուս համար:

ԲԻԷՌԻ. — Բարեկամ, դուք զիս ածիլելով եկաք,
թէ գլուխ ուռեցնելու:

ՍԱՓՐԻՉ. — Ահա կը սկսիմ, երկու խօսք ընե՞լն
ալ յանցանք է, մանկութեանդ ատենը այսպէս չէիր,
որ ատեն որ ձեր տունը գալու ըլլայի, քովս կուգայիր
և զիս կը ստիպէիր որպէս զի երկար պատմութիւնս
ներ ընէի և դուն ժամանակ կ'անցնէիր, իսկ հիմա
որչափ անհամբեր ես ու կ'աճապարես: Մեր նախնիքը
աճապարելը շատ գէշ բան է կ'ըսէին, աճապարեալ
գործին մէջ սատանան կը մտնէ կ'ըսէին:

ԲԻԷՌԻ. — (Ձայրացած ոսփի կ'ելլէ) Ի՞նչ շատախօս
մարդ ես եղեր բարեկամ, երկու ժամէ ի վեր գլուխս
տարիւր (Սիւֆֆին) ուսկի՞ց գտար այս շաղկերաս
մարդը:

ՍԱՓՐԻՉ. — Շաղկերա՞տ ըսիր, երբեք չեմ ըն-
դունիր. ինծի լռութիւնը սիրող անուանի Սափրիչ
կոմիտաս կ'ըսեն:

ՍԻՄՕՆ. — (Մեկուսի) տեսնողները Աստուծոյ
համար թող ըսեն:

ՍԱՓՐԻՉ. — Յաճախորդներս շատ կը սիրեն զիս
և վերջին ծայր կը յարգեն, մինչեւ հիմա կենացս մէջ
և ոչ մէկուն բերնէն գէշ խօսք լսեցի:

ԲԻԷՌԻ. — Ձիս պիտի ածիլե՞ս թէ ոչ. շուտ պա-
տասխանէ:

ՍԱՓՐԻՉ. — Ուրիշ ի՞նչ պատճառ ունէի հոս
գալու:

ԲԻԷՌԻ. — Ուրեմն շաղկերատութիւնը մէկդի ձգե-
լով գործի սկսէ, եթէ ուղածիս պէս շուտ մը ածիլես՝
ոսկի մը պիտի տամ:

ՍԱՓՐԻՉ. — (Ածիլելով) ես անանկ ստակը պաշ-
տողներէն չեմ... ձեզմէ ստակ մը չեմ ուզեր. վասն

դի հօրերնուդ շատ բարութիւնները տեսած եմ, լոյս իջնէ հոգոյն, առատաձեռն և ազնուական մարդ մըն էր: (Ածիլի կը սկսի) առտու իրիկուն սեղանէն մէկ երկու հիւր պակաս չէր, ինծի ալ անանկ պատիւներ, անանկ յարգանքներ կը մատուցանէր որ...

Բիէն. — Էհ, բարեկամ, ալ հիմա կը ճաթիմ, (պօռալով) վա՛յ, վա՛յ, վա՛յ, ծնօտս, ծնօտս:

ՍԱՓՐ. — Ի՞նչ եղար:

Բիէն. — Ի՞նչ պիտի ըլլամ, սատանա՛ն տանի քեզի պէս սափրիչը, ծնօտս կարեցիր:

ՍԱՓՐ. — Ես քեզի ըսի թէ աճադարելը աղէկ վախճան չունենար, յանցանքը ձերն է, վայրկեան մը հանգիստ չես նստիր որ՝ ուղածիս պէս ածիլեմ. միանգամայն աթոռ չըլլալուն գլուխնիդ չէք կրնար կոր խաղցնել, խանութս այս գործին յատուկ աթոռ մը ունիմ, հոն նստողը շատ հանգիստ կ'ընէ, անցեալ օր պարոն Հէնրին...

Բիէն. — (Ծնօթ կը բռնէ եւ գլուխը ասդ անդ խաղցնելով մեկուսի) դարձեալ սկսաւ, համբերութիւն ըսի, ալ ճարս հատաւ, հիմա կը ճաթիմ:

ՍԱՓՐ. — Կարծեմ պարոն Հէնրին կը ճանչնաք, ատաղձադործ է, Ծաղիկ փողոցին վերի ծայրը աջ կողմը երկրորդ դուռը իր տունն է:

Բիէն. — (Ձայրացած) ալ սրիկայութիւնը ձեռք առիք, եթէ ձայնդ չկտրես, ոտքիս տակը կ'առնեմ ու լաւ մը կը տփեմ քեզ:

ՍԱՓՐ. — Չէ՛, պարոն չէ՛, ներեցէք, սրիկայ չէք կրնար ըսել ինծի. ես ձեր պատառաբայծը չեմ: Ես ասանկ չահ չեմ ուղեր, ինձմէ աղէկ սափրիչ մը գտիր և անոր ածիլուէ. (գործիքները ժողուելով) սըւոր նայեցէք, հօրը տեղը մարդը ոտքին տակը պիտի առնէ եղեր, պիտի ծեծէ եղեր, պիտի վռնաէ եղեր, չեմ գիտեր ինչ պիտի ընէ եղեր... սըւոր նայեցէք հեղէ...

այս ի՞նչ աստիճան համարձակութիւն, ո՞ւր սորվեցար այդ քաջութիւնը...

Բիէնթի. — (Մեկուսի) ի՞նչ պիտի ընեմ հիմա, ի՞րաւ պիտի երթայ, մէկ երեսս ածիլուած, միւս երեսս չածիլուած, (սափրիչի) ի՞նչ է այն բարեկամս, պիտի երթաս:

ՍԱՓՐ. — Տարակոյս չկայ, այսչափ նախատինք լսելէս վերջը կարելի՞ բան է որ կենամ, հացս դո՛ւն կուտաս կոր, անցեալները յաճախողներէս մէկը անպատիւ խօսք մը ըսելուն ինչե՞ր ըրի գիտես, ես այսչափ համբերեցի նէ լուսահողի հօրդ բարեկամութեանը սիրոյն համար էր:

Բիէնթի. — (Սիմօնի) թող մի տար որ սա մարդը երթայ:

ՍԱՓՐ. — (Ձեռքէն ազատիլ ուզելով) ո՛չ, ո՛չ, թողէ՛ք զիս, անկարելի է որ կենամ, պիտի երթամ, ես սրիկայ եմ հէ՞, ես շաղակրատ եմ հէ՞, յանցանքս ի՞նչ է. երկու խօսք ալ չընեմ նէ պիտի ճախրեմ, չէ, անկարելի է, մինչեւ որ այս տարիքս եկեմ եմ ո՛ր և է մէկէ մը անարգական խօսք մը չեմ լսած...

Բիէնթի. — Պարոն սափրիչ, կ'աղաչեմ, ակամայ բերնէս թուաւ այդ խօսքը, ներեցէ՛ք, եկէ՛ք սա միւս երեսս ալ ածիլեցէ՛ք, Ծաղիկ փողոցին ծայրը նստող պարոն Հէնրիին ո՛վ ըլլալը, ուղածնուդ պէս երկար բարակ, մանրամասնաբար պատմեցէ՛ք:

ՍԱՓՐ. — (Սն դառնալով) բարեկամ, դուք ատաղձագործ պարոն Հէնրիին լաւ ճանչնալու էք:

Բիէնթի. — (Մեկուսի) տեսէ՛ք ի՞նչպէս դարձաւ, ճշմարիտ այս աստիճան շատախօս մարդ չտեսայ (սափրիչի) այո՛, պարոն Հէնրիին ճանչնալու եմ, բայց չեմ յիշեր... դուն սա անձեռոյդ հանէ:

ՍԱՓՐ. — (Պատասխանելով) այս պարոն Հէնրիին ձեր հօրը կենդանութեանը հոս շատ կուգար կ'երթար:

փառաւոր մօրուք մը սւնի. միջանասակ և գէր. գէմքը ծիծաղկոտ և վերջին ծայր խեղկատակ, միանգամայն հին գլուխներէն է, առատաձեռն և...

Բիէնի. — Հասկցայ, հասկցայ, սա՛ պարոն Հէն-րին, պարապ տեղը մի հոգնիք պատմելու, հիմա ճանչցայ, (մեկուսի) ճանչցայ ըսելէն ուրիշ ճար չկայ:

ՍԱՓՐ. — Քանի որ կը ճանչնաք, ինչո՞ւ իրեն հետ չէք տեսուիր, որչափ ըլլայ նէ հօրդ բարեկամներէն է, եթէ կը հաճիք այսօր հոս հրամցնեմ, խեղճին վիճակը այս օրերս շատ գէշ է, խանութիս քովը ծխովածառի խանութ մը ունէր, ասկէց երկու տարի առաջ մաքսատան դործակալներէն պարոն Քանթալօնին... գուցէ կը ճանչնաք:

Բիէնի. — (Մեկուսի) տարակոյս չկայ որ այս մարդը զիս պիտի խենդեցնէ:

ՍԱՓՐ. — Այս բարեկամին բռնեց խանութը, անոր ծախեց, այնչափ համոզեցի թէ եկուր այդ ստակով կալուած մը առ. բայց որո՞ւ կ'ըսես, երեք ամսուան մէջ ստակին տակէն մտաւ վրայէն ելաւ, այս աստիճան ձեռքը բաց մարդ չեմ տեսեր:

Բիէնի. — Բարեկամս պաշտօննիդ մոռցաք, ալ բաւական է կ'աղաչեմ:

ՍԱՓՐ. — Մարդս երբեմն անանկ գործերու մէջ կը գտնուի որ չի կրնար խնդալը բռնել, օր մը եկեր մեր տունը զիս կը հարցնէ, ես ալ նոյն միջոցին ակռայ քաշելու դացած ըլլալուս:

Բիէնի. — Ի սէր Աստուծոյ, ի սէր զաւակացդ, կ'աղաչեմ լռէ, ալ համբերելու ժամանակ չունիմ:

ՍԱՓՐ. — Քաւ լիցի պարոն, Հէնրիին ի՛նչ բնուածեան տէր ըլլալը պատմէ ըսելուդ համար:

Բիէնի. — Բարով չըսէի:

ՍԱՓՐ. — (Ածիլի կը սկսի եւ երկու անգամ երեսին կը փոնգֆայ):

ԲԻԷՌ. — (Բարկուքեամբ երեսը սրբելով) Է՛շ գըլուխ, դէմքս թքով ծեփեցիր, այս ի՞նչ անքաղաքավար մարդ ես եղեր:

ՍԱՓՐ. — Ա՛հ, պարոն, ներողութիւն կը խընդրեմ, այնպէս հարգուխ եղեր եմ որ (դարձեալ կը փոնգֆայ) ո՛հ, արդարեւ շատ անկրթութիւն, այս թշուառական բռնքտալն ալ ուսկի՞ց եկաւ: (Իբր քե՛ ձեռքը կ'ուզէ պագնել). ներեցէ՛ք կ'աղաչեմ ազնիւ պարոնս:

ԲԻԷՌ. — Ի՛նչ որ է հոգ չէ, դուն զիս շուտ մը ածիլէ:

ՍԱՓՐ. — Յիշաւի շատ ամօթահար եմ:

ԲԻԷՌ. — Հոգ չէ՛, հոգ չէ, գիտնալով չըրիր ա՛, բան մըն էր եղաւ, սա դործդ լմնցուր:

ՍԱՓՐ. — Եթէ չներէ՛ք, ամօթէս դետինը կ'անցնիմ:

ԲԻԷՌ. — (Մեկուսի) ո՞ւր էր թէ անանկ բան մը ըլլար եւ ես ձեռքէդ աղատէի (բարձր) յանցանքդ ներեցի կ'ըսեմ պարոն, ի՞նչ խօսք չհասկցող մարդ ես պէ՛:

ՍԱՓՐ. — Իրա՞ւ կ'ըսէ՛ք:

ԲԻԷՌ. — Եւ ի՞նչպէս քեզի համոզելու է, ներեցի կ'ըսեմ, ներեցի: Եթէ կ'ուզես անդամ մըն ալ փռնքտայ:

ՍԱՓՐ. — Աստուած կեանք տայ, Աստուած մէկ օրդ հաղար ընէ: (Կը լմնցնէ):

ԲԻԷՌ. — (Ազատելով) ո՛հ, բարի աղատում, ճամբան մէկ երկու աղքատի ողորմութիւն տամ. թշուառականը մօրմէս կերած կաթս քթէս բերնէս բերաւ. (Ժամացոյցը նայելով) Ժամանակն ալ անցեր է, աճապարեմ, հագուիմ ու երթամ: (Սիւսօնիմ) ահա՛ ես

կ'երթամ, դուն սա դարչելիին ստակը տուր և ճամբէ:

ՍԱՓՐ. — Այ ասկէ ետքը ինծի պիտի ածիլուիք, այնպէս չէ՞:

ԲիէՌ. — Ի՞նչ ըսել է, քանի որ ողջ եմ, կ'երդնում որ տանս տողակէն իսկ անցնելու թող չպիտի տամ: (Սիմօնին հետ կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Ը.

Ս Ա Փ Ր Ի Չ (առանձին)

Պարոն ԲիէՌին աճապարելով ածիլուելէն և անմիջապէս ձգել երթալուն եթէ նայելու ըլլանք, անշուշտ սիրունին դռնելու համար է, բայց եթէ փորձանքի մը հանդիպի, ո՞վ պիտի ազատէ, հօրմէն շատ աղէկութիւն տեսած ըլլալուս պիտի ստիպուիմ ետեւէն երթալ, և մտած տանը դրանը քով սպասել, որպէս զի եթէ դժբախտութիւն մը պատահի, զայն ազատեմ: (Կը մեկնի):

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ



Ա Ր Ա Ր Բ.

“ԹՕՄՆԻՒՆ ՍԵՆԵԱԿԸ”

(Տեսաւրանին խորք դուռ մը, աջդին պատուհան մը, ձախդին սեղան մը ներմակ ծածկոցով)։

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԹՕՄՆԻ. — (Առանձին) ա՛հ, ո՞րչափ դժուար է ժամերով սպասել սիրահարի մը, ահա հիմա կուգայ ըսելով իրիկուընէ ի վեր կը նեղուիմ։ Ոտնաձայն մը լսելուս պէս խկոյն պատուհանը կը վազեմ, կարծելով թէ ինքն է արդեօք դիմ խաբելով ուրիշի մը գնաց, բայց չեմ յուսար, ահա փողոցէն ոտնաձայն կը լսեմ, (պատուհանէն կը նայի) դարձեալ ան չէ. դոնէ ծառան կանչեմ (զանգակը կը զարնէ) Ֆիլիպ։

Տ Ե Ս Ի Լ Բ.

Ն Ո Յ Ն Է Լ Ֆ Ի Լ Ի Պ

Ֆիլիպ. — (Դրանը մէջ կենալով) հրամայեցէք Տիւրուհի։

ԹՕՄՆԻ. — Ֆիլիպ Բիէռէն ի՞նչ լուր։

Ֆիլ. — Երկու ժամէ ի վեր պարտէզին դուռը սպասելէն ոտքերուս ջուր իջաւ, ոչ եկող կայ և ոչ գացող։

ԹՕՄՆԻ. — Այսուհետեւ չգալուն ալ պէտք չէ տարակուսիլ։

Ֆիլ. — Այնչափ երդումներով խոստանալէն ետքը չեմ յուսար թէ չգայ։

ԹՕՄՆԻ. — Եթէ գալու ըլլայ, խստիւ պիտի յանդիմանեմ, Ֆիլիպ դուն զնա դարձեալ պարտէղին դուռը սպասէ, հօրեղբայրս եթէ գալու ըլլայ, շուտով ինծի իմացուր:

Տ Ե Ս Ի Լ Դ.

ԹՈՄՆԻ. — (Առանձին) Երբոր տղայ էինք, Բիէ-ռին հետ իբր եղբայր ժամանակ կ'անցնէինք, հայրերնիս ալ իրարու հետ լաւ բարեկամ էին, բաւական ժամանակ անցնելէն ետքը հարսնացու աղջիկ եղայ. հայրս զիս վաճառականի մը նշանեց, հայրս վարքը բարքը ինչ բնասրութեան տէր ըլլալը չէր փնտռեր, այլ հարստութիւն կը փնտռէր. վերջապէս ամուսնաւէս երկու տարի ետքը ամուսինս յանկարծամա՜ն ըլլալով այրի մնացի: Ո՛հ, այրիութեանս առաջին օրերուն Բիէն Պէլճիգայէն նոր եկեր էր և իմանալով այրի մնալս փափաքեր էր զիս կ'նութեան առնուլ, հայրս հաճութիւն տուաւ բայց ես մերժեցի, ո՞վ գիտէր թէ վերջը այսչափ պիտի սիրէի:

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆՈՅՆ ԷՆ ՖԻԼԻՊ (իյնալով ելլալով)

Ֆիլ. — Տիրուհի կուգայ կոր:

ԹՕՄՆԻ. — Ով:

Ֆիլ. — Պարոն Բիէնը:

ԹՕՄՆԻ. — Ո՞ւր է:

Ֆիլ. — Ահաւասիկ: (Ֆիլիպ կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Ե.

Թ Օ Մ Ն Ի Ե Բ Ի Է Ռ

Թ Օ Մ Ն Ի. — Անգուլթ քեղի:

Բ Ի Է Ռ. — Ո՛հ, սիրուն թռչնիկս՝ փոխանակ քաղցր խօսքերովդ սիրտս երջանիկ ընելու, զիս կը յանդիմանե՞ս: Յանցանքս ի՞նչ է:

Թ Օ Մ Ն Ի. — Ալ ի՞նչ պիտի ըլլայ, անպատճառ ժամը վեցին հոս գտնուիլ կ'երգնուես, և ժամը եօթուկէսին կուգաս, զիս պատուհանին առջեւ սպասցնելով և սրամաշուքի մէջ թողլով:

Բ Ի Է Ռ. — Եթէ ուշանալուս պատճառը իմացնեմ, աղէկ գիտեմ որ ներողամիտ պիտի գտնուիք:

Թ Օ Մ Ն Ի. — Ո՛վ գիտէ ո՞ր զբօսավայրը կը պըտըտէիր:

Բ Ի Է Ռ. — Ո՛չ թօմնի, պատուոյս վրայ կ'երգնում որ զբօսանք բառը մտքէս անգամ չանցուցի, այլ փորձանքի մը հանդիպեցայ:

Թ Օ Մ Ն Ի. — Ըսէ տեսնեմ, ի՞նչ փորձանքի հանգիպեցար:


Բ Ի Է Ռ. — Առաւօտուն ածիլուելու համար մեր աւանակ ծառան զրկեցի սափրիչս բերելու. զայն չգըտնելով, ուրիշ մը բերեր էր, կենացս մէջ ասանկ գարշելի մարդ տեսած չէի:

Թ Օ Մ Ն Ի. — Ի՞նչ ըրաւ:

Բ Ի Է Ռ. — Բարեւ տուաւ չտուաւ խօսքի սկսաւ, ալ բան չունիս նէ մտիկ ըրէ, թշուառականը ատենօք հօրս սափրիչն է եղեր, շատ դրամը առեր է, չերկընցնեմ սիրելիս՝ շատախօսին մէկը:

Թ Օ Մ Ն Ի. — Վստիկու էիր:

Բ Ի Է Ռ. — Վստե՞մ մի, ծեծելու ալ ըլլաւ չեր-



Թար, գարշելին դժուարաւ մէկ երեսս ածիլեց և այն միջոցին ծնօտս կտրեց.

ԹՕՄՆԻ. — Տեսնե՛մ... իրաւ կտրեր է... ես ալ քանի երեսդ կը նայիմ, ինքնիրենս կ'ըսեմ թէ ինչէ՞ն արդեօք այս գեղեցիկ ծնօտդ ուռեցեր է:

ԲԻԷՌ. — (Ոտք գետին զարնելով մեկուսի) Վերջապէս դուչակուլթիւնս կատարուեցաւ, սատանան տանի այդ սափրիչը:

ԹՕՄՆԻ. — Վերջապէս:

ԲԻԷՌ. — Կ'աղաչեմ Թօմնի, այլ եւս վերջացնենք այս խօսքերը, որովհետեւ ըրածները քանի միտքս գայ, բարկութենէս կը խենդենամ:

Տ Ե Ս Ի Լ 2.

ՆՈՅՆՔ և ՖԻԼԻՊ (աճապարելով կը մօճեն)

ՖԻԼ. — Գլխունուդ ճարը գտէ՛ք, գործերնիդ գէշ է, վասն զի հօրեղբայրդ քեզ տեսնելու կուգայ օրիորդ: (Կը մեկնի):

ԹՕՄՆԻ. — (Շուարեալ) Հիմա ի՞նչ ընելու է.

ԲԻԷՌ. — (Հոս հոն վազելով) ա՛հ, պահուքտելու տեղ. կ'աղաչեմ Թօմնի զիս պահէ.

ԹՕՄՆԻ. — (Բիեռը սեղանին ցակը խօքելով) ահա՛, հոս եկուր, չըլլայ որ ձայն հանես:

Տ Ե Ս Ի Լ 3.

ԲԱՍԿԱՆԼ և ԹՕՄՆԻ

ԲԱՍԿԱՆԼ. — Ի՞նչ էր այն Թօմնի, սենեկիդ մէջ աղմուկ մը կար, հոս հոն վազվառելու ձայներ... ինչո՞ւ այդչափ դեղներ ես... հիւսնդ ես միթէ... շուտ ըսէ որ կասկածանքէ տղատիմ:

ԹՕՄՆԻ. — Ա՛հ, մի հարցներ սիրելի հօրեղբայրս, զեռ սիրտս կը տրոփէ:

ԲԱՍԿ. — Ըսէ ի՞նչ պատահեցաւ:

ԹՕՄՆԻ. — Երբ առանձին նստած կը մտածէի, կատուի մեծութեամբ խոշոր մուկ մը չեմ գիտեր ծակը կորսնցուցեր էր, ի՞նչ էր բերք սենեկէս ներս մտաւ:

ԲԱՍԿ. — Ա՛յ զարչելի... է՛յ վերջը, վերջը:

ԹՕՄՆԻ. — Տեսնելուս պէս խելքս գլխէս թռաւ, իսկոյն տեղէս ցատկելով սա անկիւնը դացի. ա՛յն ալ ետեւէս եկաւ, այս անկիւնը եկայ, դարձեալ ետեւէս, ո՛հ, վախէս ի՞նչ ընելս չգիտցայ, խելքս պիտի թռցնէի թէ որ ծառաս չի հասներ և չի վռնտեր:

ԲԱՍԿ. — Ո՛հ, սիրելի զաւակս (կը ցատի) սատա-նա՛ն տանի դանոնք. եթէ մեր տունը դաս պիտի տես-նես որ անոնց ձեռքէն ոչ պանիւր մնացած է, ոչ հաց և ոչ ալ ճրագ: Անցեալները հարիւր հատ հաւկիթ առի:

ԹՕՄՆԻ. — (Մեկուսի) բերանը բացուեցաւ ալ չի գոցուի:

ԲԱՍԿ. — Երէկուան օրս հատ մը պէտք եղաւ, դարանը բացի, մէկ հաւկիթ մը չգտայ, սակաւը գլուխս անցաւ: Բնթի կատու մը ունէի՞նք, անցեալ օր ալ ականջները իւղոտուեր է ի՛նչ է եղեր, մուկը ան տա-րեր է: Ա՛խ, այս մուկերուն ձեռքէն քաշածնիս շատ է, իրաւ մոռցանք ըսելու, ճամբան եկած ատենս պա-րոն... ինքը... ի՞նչ էր անոր անունը... Ը՛... լեզ-ուիս ծայրն է... սա պանդոկին փողոցին գլուխը բնակող... կօչկարար... հա՛ պարոն Տիտոսը բարեւ ըրաւ, յետոյ:

ԹՕՄՆԻ. — (Մեկուսի) ի՞նչպէս ազատելու է ձեռ-քէն, (գլուխը ձեռքից մեջ առնելով բարձր) վա՛յ, վա՛յ, վա՛յ, այս ի՞նչ անտանելի ցաւ:

ԲԱՍԿ. — Կնոջը հագուստը շատ դեղնեղիկ էր, կա-նանչ մետաքսի վրայ ձեռքիս չափ ճիւղեր բանուած,

անանկ գեղեցիկ, անանկ սքանչելի, անանկ փայլուն, զարդարուն և ընտիր ապրանք չի կրնար ըլլալ, արդարեւ ի՞նչ մեղքս պահեմ, աչքս մնաց:

ԲԻԷՌ. — (Գլուխը դուրս հանելով մեկուսի) հոս ալ շատախօսի մը հանդիպեցանք:

ԲԱՍԿ. — Իսկ պարոն Տիտոսը որ ըսես, կնոջը հագուստներուն համեմատ հագուե՞ր էր, նեղ բանթալոն, կարճ բաճկոն, զարդարուն մուճակներ, ձեռքը բարակ դաւազան մը և գլուխը շիճ գլխարկ մը:

ԹՕՄՆԻ. — (Նոյնպէս) ո՛հ, գլուխս, գլուխս:

ԲԱՍԿ. — Ան ի՞նչ է Թօմնի, գլուխդ կը ցաւի:

ԹՕՄՆԻ. — Այո՛ հօրեղբայր, սաստիկ կը ցաւի... ներեցէ՛ք կ'աղաչեմ, քիչ մը ատեն առանձին թողէ՛ք զիս, վասն զի պիտի քնանամ:

ԲԱՍԿ. — Շատ աղէկ, քիչ մը քիթդ քացալի քաշէ գլխու ցաւու գեղը ան է, իրաւ թէ և պաղ ջուրն ալ դանակի պէս կը կտրէ կ'ըսեն երբ գլուխը լուացուի, անցեալ դիշեր պարոն Քանթալոնը կ'ըսէր, խեղճ մարդուն գլխուն ամէն տեսակ փորձանք եկաւ, այն գեղեցիկ աղջիկը՝ սարսափելի նիհարէր, դեղներ, փչելուդ պէս պիտի իյնայ, վասն զի ամուսինը շատ գէշ ըլլալէն խեղճը օրէ՛օր կը հալի ու կը մաշի, այն ատեն շատ աշխատեցայ համոզելու պարոն Քանթալոնը որ աղջիկը այդ մարդուն չտայ, բայց օգուտ չբաւ:

ԹՕՄՆԻ. — Հիմա խեղքս կը թոցնեմ, գլուխս, գլուխս:

ԲԱՍԿ. — Իմ գուշակութիւններս կատարուեցան, եթէ ուրիշի մը տային, այս փորձանքը գլխնուն չէր գար:

ԲԻԷՌ. — (Գլուխը դուրս հանելով մեկուսի) սափրիչը այս շատախօսին քով բան մը չէ, անկէ աւելի գլուխ կ'ուռեցնէ կոր:

ԲԱՍԿ. — Անցեալ օր եկեր կ'ըսէր թէ այն ժա-

մանակ քու խրատիդ մտիկ ընելու էի, փոխանակ զաւակս երջանիկ ընելու, անոր գերեզմանը պատրաստեր եմ:

ԹՕՄՆԻ. — Ա՛հ, հօրեղբայր, Աստուծոյ սիրոյն ըլլայ, մտիկ ընելու ժամանակ չունիմ, գլուխս կը ճաթի:

ԲԱՍԿ. — Այո՛, աղջիկս քեզի ալ անհանդիստ ըրի, բոնուելիք բերանս չի դոցուիր որ, քանի որ եկեր եմ, երթամ հայրդ ալ տեսնեմ, (դռնէն դառնալով) տեսէք կը մոռնայի կոր: Հայրդ քիչ մը առաջ վարը գաւիթին մէջ քանի մը մարդոց հետ կը վիճէր:

ԹՕՄՆԻ. — Չգիտես հօրեղբայր, ամէնուն հետ կը կռուի, եթէ զինքը տեսնել կ'ուզէք աճապարեցէք, որովհետեւ քիչ մը առաջ տեղ պիտի երթամ կ'ըսէր:

ԲԱՍԿ. — Բայց մտիկ ըրէք, ծիծաղելու բան է, ըսած մարդերէս մէկը ճանչցայ, ժամանակաւ մեր քովի խանութը սափրիչ էր... անունը... ը'... Կոմիտաս է կարծեմ:

ԲԻԷՆԻ. — (Տակեց) Հիմա դործս դէշ է:

ԲԱՍԿ. — Խեղճ մարդը ոտքերը գետին զարնելով կը պօռար և կ'ըսէր... «Եթէ իմ բարեբարիս տղան ինծի չյանձնէք, դատաւորին կը մատնեմ ձեզ»:

ԹՕՄՆԻ. — Հայրս ի՞նչ ըսաւ:

ԲԱՍԿ. — Ի՞նչ պիտի ըսէ. հոս անանկ մէկը չկայ, կորսուէ սրկէ կը պօռար... Բայց այս ինչ աղմուկ է: (Դուրսը աղմուկ):

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՆՈՅՆՔ, ՅՐԱՆՄՈՒԱ, ՍԱՓՐԻՉ, ԺՕՌԺ և ՍԻՄՕՆ

ՅՐԱՆՄ. — Թօմնի միւսս սենեակը գնայ. (Թօմնի կ'երթայ) սա աչքըբաց մարդիկը հոս մարդ պահեր էք կ'ըսեն, ձեզ տեսնեմ կոպիտներ, շուտ գտէք:

ՍԱՓՐ. — (Առաջ անցնելով) այո՛, պարոն Բիէ-
ռին այս տունը մտնելը մենք տեսանք: (Կը սկսին
փնտռել):

ՖԻԱՆՍ. — Եթէ չգտնէք, գիտցէք որ ձեռքէս
ազատելիք չունիք, ես ձեզի կը սովորեցնեմ գրացինե-
րու առջեւ մարդ կը պահէք ըսելը:

ՍԱՓՐ. — (Ծածկոցը վեր առնելով) ահաւասիկ
դտայ պարոն:

ԲԻԷՌ. — Ա՛հ, կ'աղաչեմ, այսչափը բաւական է
զիս մի՛ խայտառակեր:

ՍԱՓՐ. — Խօսքս մտիկ ընելով եթէ այսօր չա-
ծիլուէիք, այս փորձանքը գլխնուդ չէր գար:

ՖԻԱՆՍ. — (Ջառմացմամբ) դո՛ւն ես պարոն Բիէռ.
Եօրդ հետ իբր եղբայր վարուելով, քեզի զաւկիս պէս
սիրելուս համար այս սրիկայութիւնը ըրիր:

ԲԻԷՌ. — Ա՛հ, տէր իմ:

ՖԻԱՆՍ. — Տեսէք սա սրիկան, փոխանակ ամօ-
թէն կարմրելու, կը յանդգնի պատասխանել, պէտք է
որ քեզ սաստիկ պատժեմ:

ՍԱՓՐ. — Ո՛չ պարոն, չպիտի կրնաս պատժել
դայն:

ՖԻԱՆՍ. — Թշուառական մարդ, դուն ո՞վ ես որ
ինծի արգելք կ'ըլլաս:

ՍԱՓՐ. — Ես ես եմ:

ԲԻԷՌ. — Գթութի՛ւն տէր իմ, գթութիւն, ա-
մէն բան ընելու իրաւունք ունիս, երկու տարիէ
որ աղջկանդ սէրը զիս ստիպեց:

ՍԱՓՐ. — (Մեկուսի) անոր համար ածիլուելու
կ'աճապարէր (Բիէռին կամաց մը) քեզ տեսնեմ, յա-
ջողէ:

ԲԻԷՌ. — (Ինքն իրեմ) ճար չկայ քիչ մը շողո-
քորդելու է, (բարձր Ֆրանսուային) ո՛հ, այն սէրը
չէ՞ որ ձեր ներկայութեանը զիս կը խայտառակէ:

ՍԱՓՐ. — (Մեկուսի) աղէկ բերան կը բանեցնէ
կոր:

ԲԻԷՌ. — (Ֆրանսուային ոտքին իյնալով) ա՛հ,
տէր իմ, ներէ:

ՖՐԱՆ. — (Ոտքը զարնելով) ե՛լ անպիտան, լիբբ,
հօրդ մեռնելուն՝ դուն ստակէիր, աւելի աղէկ կ'ըլլար:

ՍԱՓՐ. — (Խոնարհելով) անոր յանցանքը մեծ է,
մենք ատիկա շատ լաւ գիտենք, բայց այս անգամ
ներեցէք:

ՖՐԱՆՍ. — Ասիկա ներելո՞ւ յանցանք է:

ՍԱՓՐ. — Ի՞նչ օգուտ եղածը եղած է, այսչափ
մարդոց մէջ խայտառակուիլը բաւական է իրեն, եթէ
տարածայնելու ըլլաք, ձեր պատիւն ալ կ'արատ-
ւորի, ըստ իս, աւելի աղէկ կ'ընէք, եթէ ձեր աղ-
ջիկը անոր տաք:

ԱՄԷՆՔԸ. — Այո՛, այո՛, շատ աղէկ կ'ըլլայ:

ՖՐԱՆՍ. — Խենդ էք, ի՞նչ էք, ասանկ սրիկան
ի՞նչպէս փեսայ ընդունիմ:

ՍԱՓՐ. — Հաւատայ որ ես ձենէ աւելի զաւակացդ
և քու պատիւդ կը պաշտպանեմ, քանի մը տորի ա-
ռաջ բարեկամներէս մէկուն ալ ասանկ դիպուած մը
պատահեցաւ, աղջկան հայրը ձեզի նման չէր ընդու-
նէր, բայց վեց ամիս չանցած աղջիկը հիւանդացաւ և
մեռաւ:

ՖՐԱՆՍ. — (Մեկուսի) այո՛, ասանկ դէպք մըն
ալ ես կը յիշեմ, եթէ իմ աղջիկս ալ մեռնի, ինք-
զինքս ծովը կը նետեմ, ուրիշ ճար չկայ, գէշ աղէկ
տալու է: (Ծառանքուհի) քիչ մը մեղի առանձին թո-
ղէք, (Ժօռժ, Սիմօն եւ Բասկալ կը մեկնին) Թէպէտ
քեզի լաւ մը կը վարձատրէի, բայց հօրդ հետ ունեցած
բարեկամութիւնս պարտք կը դնէ վրաս քեզի հոգալ:
ուրեմն քեզ իմ փեսաս կ'ընտրեմ... կ'ընդունի՞ք:

ՍԱՓՐ. — Հոգուով, մարմնով:

ՖԲԱՆ. — Այո՛, այո, այս շաբթու հարսանեաց հանդէսը պիտի կատարուի, դուն պատրաստուէ՛, ես ալ երթամ աղջկանս աւետեմ: (կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Թ.

Բ Ի Է Ռ Ե Ս Ա Փ Ր Ի Չ

ԲԻԷՌ. — Ա՛հ, հիմա պիտի խենթեմ, վերջապէս պիտի կարենամ Թոմմիս կնութեան առնել:

ՍԱՓՐ. — Ազօթէ որ ես հոս գտնուեցայ, ապա թէ ոչ գործդ դէշ էր:

ԲԻԷՌ. — Շնորհակալ եմ պարոն սափրիչ, առւր ձեռքդ համբուրեմ:

ՍԱՓՐԻՉ. — Քաւ լիցի, քաւ լիցի:

ԲԻԷՌ. — (Քսակ մը ցալով) Թէպէտ և չնչին գուռ մար մըն է, բայց նորէն կը տեսնուինք:

ՍԱՓՐ. — Ո՛չ, ո՛չ, ես անանկ ստակ պաշտողներէն չեմ բարեկամս, այսուհետեւ ինձի ածիլուելու խոստացիր, ես ուրիշ բան չեմ ուզեր:


ԲԻԷՌ. — Ատոր մի տարակուսիր, քանի որ ես ողջ եմ, ձենէ զատ և ոչ մէկուն խանութը պիտի յաճախեմ:


ՍԱՓՐ. — Պատմութիւններս մտիկ ընելու չպիտի ձանձրանաս այնպէս չէ՞:

ԲԻԷՌ. — Այդ կէտը քիչ մը դժուար է, բայց ինչ ընենք, կ'ընդունինք:

ՍԱՓՐ. — Ուրեմն երթանք, հարսանեաց պատրաստութիւնները տեսնենք:

Վ Ե Ր Ձ





ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

A 295

Անուս	25
Արդիական Օրիորդներ	12
Անձնուէր Ընկերը Թասրգ.	50
Ակնցի Հանի Սղան	Յ. . Ամիրեհնց 40
Արեթն Մալ Ալան	15
» » »	Հայասառ Թուրքերէն 25
Ասիացի Սափրիչը	Պապեան 10
Ամերիկահայ Փեսացուն կամ Տայը Կարապետ	25
Բարեկենդանի Անկուսիները	15
Գողը	Տ. Միրքո 15
Դղուժի Վանառականը	15
Երանոս Աղբար	Տ. Փափագեան 25
Երկու Խուլիք	Մօլիք 15
Թիք Թաք	10
Լեպլեպիհի Հօր Հօր Հայասառ Թրք.	Օրերէք 30
Կրլ Սփառի կամ Մասս Մեզն է	Ե. Թօլանեան 50
Հնարամիտ Վարձակալը	10
Մարիամ Մազբաղենացի	50
Սասանա	10
Սիփօք	10
Շասախօս Սափրիչը	15

Յ. Արրահամեան Գրատունը կը հայթայթէ Դպրո-
նական, Վիպական, Թատերական, Պատմական, Բա-
նաստեղծական, ամէն տեսակ Հայերէն գիրքեր և այլն
Մ Օ Տ Օ Ր Է Ն

Վիրի պանդոկին սպասաւորը


Գործարանին երկրաչափը

Գաւաթ մը թեյ

Հասցէ՝

ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Կ. Պոլիս Պապը Ալի, Րէշիտ Էֆ. Խան



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029565

A 11
565